ՋԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ

14-16-րդ դարերը համաշխարհային պատմության մեջ նշանավորվեցին իբրև վերածննդի, հումանիզմի և ռացիոնալիզմի ժամանակաշրջան: Ռացիոնալիզմը փոխարինելու եկավ սխոլաստիկային, որի գլխավոր դրույթը հետևյալ դարձվածն էր՝ «կարևորը հավատալն է, այլ ոչ թե գիտենալը»: Անշուշտ, գաղտնիք չէ, որ մինչև պատմագիտության ու պատմագրության առաջացումը քաղաքակիրթ ժողովուրդների շրջանում կատարվել է պատմական գիտելիքների կուտակման բարդ ու երկարատև գործընթաց՝ փաստերի և իրադարձությունների պարզ գրառման միջոցով: Ընդ որում, հարկ է նշել, որ տարեգիրները չէին ըմբռնում հասարակության զարգացման գործընթացների բուն էությունն ու նշանակությունը՝ շատ հաճախ փաստերը մեկնաբանելով իբրև Աստծու կամքի դրսևորում, ինչն էլ, ըստ նրանց, պատմության շարժիչ ուժն էր:

Զուգահեռաբար անհրաժեշտ է ասել, որ ժամանակի ընթացքում պատմությունը գրի առնող հեղինակները պատմական իրադարձությունները պայմանավորում էին նաև հոգևոր ու աշխարհիկ իշխանությամբ օժտված մարդկանց հոգեվիճակով: Վերածննդի դարաշրջանը պատմության այն ժամանակահատվածն էր, երբ Եվրոպայի առավել զարգացած երկրներում սկսվել էր մարդու հոգևոր ազատագրումը: Արդեն բանականությունն էր դիտվում և ընկալվում իբրև ամեն մի գործընթացի չափանիշ: Պատմագիտական միտքը ևս ազատագրվում էր կրոնական դոգմաներից: Պատմությունը մեկնաբանվում էր որպես մարդկանց գործունեության արդյունք ու հետևանք: Աստծու փոխարեն մարդն սկսեց հայտնվել պատմական գործընթացների առանցքում:

Ռուսաստանում անցյալի վերաբերյալ ռացիոնալիստական պատկերացումներն, օրինակ, առավել վառ ձևով դրսևորվեցին Պետրոս Մեծի կառավարման տարիներին /1689-1725 թթ./, երբ անդրանիկ փորձերն էին կատարվում 18-րդ դարի առաջին քառորդում Ռուսական կայսրությունում տեղի ունեցած դեպքերը մեկնաբանելու բանականության դիրքերից /Ա. Ի. Մանկիև, «Ռուսական պատմության կորիզը», Պ. Պ. Շաֆիրով, «Հյուսիսային պատերազմը», Ֆ. Պրոկոպովիչ «Կայսր Պյոտր Մեծի պատմությունը» և այլն/:

Գայով հայ պատմագրությանը՝ պետք է ասել, որ այն ևս մի նոր զարգացում ապրեց 17-րդ դարում: Ընդ որում, հարկ է նշել, որ այդ զարգացումը կատարվել է ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական՝ մասնավորապես

Պարսկաստանի ու Հնդկաստանի գաղթօջախներում: Հայ պատմագրության զարթոնքը սերտորեն կապված էր 17-րդ դարի 30-40-ական թվականներից հայ իրականության մեջ սկսված մշակութային կյանքի ու հասարակական-քաղաքական մտքի աշխուժացման հետ և իր վրա կրում էր լուսավորական ու ազատական գաղափարների ազդեցությունը: Ուստի, պատահական չէ, որ 17-րդ դարի հայ պատմագիրների աշխատությունները խիստ մեծ արժեք են ներկայացնում հատկապես նախորդ դարաշրջաններում ստեղծված պատմագրական երկերի համեմատությամբ:

1639 թ. Քասր-Շիրինի պայմանագրով ավարտվեց թուրք-պարսկական պատերազմը, և հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ իր հայրենիքում զբաղվելու խաղաղ, շինարար աշխատանքով: 17-րդ դարում հայ հասարակության մեջ տնտեսական, քաղաքական ու մշակութային բարձունքներ են նվաճում հայ վաճառականները, որոնց շրջանում զգալիորեն բարձր էր կրթական մակարդակը: Հասարակության այս նոր խավը, որի կենտրոնը դարձել էր Նոր Ջուղան, ծավալել էր համաշխարհային մասշտաբների հասնող առևտրական գործունեություն: Հասարակական կյանքում գրավելով կարևոր դիրքեր՝ հայ վաճառականներն սկսեցին իրենց կամքը թելադրել հոգևոր շրջաններին և նոր սաղմնավորվող հայ մտավորականությանը: Նրանք սկսեցին հանդես գալ նաև որպես գրողների, թարգմանիչների և հոգևոր-մշակութային այլ գործիչների մեկենասներ: Վաճառականների նման գործունեության հետևանքով հոգևորականությունը կորցրեց իր գերակա, մենաշնորհային դիրքերը մշակութային կյանքում, իսկ վաճառականներն իրենց հետ գրական ասպարեզ բերին նոր աշխարհընկալում: Նրանք սկսեցին գրի առնել իրենց առնչվող անցուդարձերը: Վաճառականների միջոցով է, որ լայն տարածում գտան ժամանակի ու տարածության մասին նոր ընկալումները: Պետք է ասել, որ նրանց գրառումներն աչքի են ընկնում ժամանակի ճշգրտությամբ:

Ուշ միջնադարյան հայ մատենագրության մեջ ի հայտ են գալիս նոր ժանրեր՝ ուղեգրություններ, օրագրություններ, հուշագրություններ: 15-րդ դարից ի վեր Հայաստանի հարևան ու հեռավոր երկրներում ստեղծվում ու ծաղկում են ապրում հայկական գաղթավայրերը՝ իրենց ներքին կառույցներով, շրջակա բնակչության ու հայրենիքի հետ ունեցած ուրույն կապերով: Հայկական վաճառականությունը նպաստում է նոր հայացքների ու մտածելակերպի տարածմանը նաև հայ գաղթօջախներում:

Հայկական գաղթավայրերի առաջացման և ամրապնդման արդյունքներից մեկը հայերին ընդունող երկրների ու նրանց անցյալի նկատմամբ հայ գիտական մտքի հետաքրքրության աճն էր: Պատահական չէ, որ պատմական

աշխատություններ են գրվում Իրանի, Հնդկաստանի և հատկապես այն երկրների վերաբերյալ, որոնց տնտեսական կյանքում նկատելի ու կարևոր դիրքեր էին ձեռք բերել հայերը: Գաղթավայրերի ստեղծմանն ու այնտեղ ազգային կյանքի կազմակերպմանը գրեթե զուգընթաց հայ իրականության մեջ ավելի ու ավելի էին սրվում դավանաբանական բնույթի խնդիրներն ու վեճերը: Հատկապես սուր պայքար էր ընթանում հայկական գաղթօջախներում կաթոլիկ եկեղեցու և նրա սպասավորների դեմ, որոնք ձգտում էին հնարավորինս շատ հայերի դարձնել կաթոլիկ հավատի: Օտարազգի հեղինակները վերաշարադրում էին հայոց պատմությունը՝ ելնելով կաթոլիկ եկեղեցու շահերից:

Հայ պատմագրության մեջ խնդրո առարկա դարաշրջանում տարածում է գտնում ունիթորների դեմ դավանաբանական վեճերի պատմությունների շարադրումը: Պայմաններ են ստեղծվում նաև հայոց եկեղեցու ներսում կատարվող կարևոր իրադարձությունների գրառման համար: Հայ պատմագրության վերելքը 17-18-րդ դդ. պայմանավորված էր նաև հոգևոր կյանքում կատարված խոշորամասշտաբ տեղաշարժերով: Նկատվում է ուժեղ ձգտում՝ վերադառնալու անցյալի մատենագրական ժառանգությանը, տեղեկանալու հայոց պատմությանը և նախորդ դարերում ստեղծված հոգևոր-մշակութային արժեքներին:

Ուշ միջնադարում տարածում են ստանում հատկապես ուղեգրությունները: Հայ ուղեգիրները նկարագրում էին իրենց այցելած քաղաքները, դրանց տեսարժան վայրերը: Նրանք հիացմունքով են խոսել նշանավոր վանքերի ու եկեղեցիների մասին: Հայ ուղեգիրների երթուղին հաճախ էր անցնում Իտալիայով, Շվեյցարիայով, Գերմանիայով, Ֆրանսիայով, Իսպանիայով ու Պորտուգալիայով: Հարկ է նշել, որ դեռևս 15-րդ դարի վերջին /1489-1496 թթ./ եվրոպական երկրներ է այցելել Մարտիրոս Երզնկացին, որը թողել է իր ճանապարհորդական գրառումները: Հաջորդ դարերից սկսած՝ ուղեգրությունները ձեռք են բերում տարբեր բովանդակություն: Ավելի հանգամանալից են դառնում այն երկրների նկարագրությունները, որտեղ եղել էին ուղեգիրները: Ընդհանուր շարադրանքների մեջ հայտնվում են հեղինակների անձնական կյանքի, ընտանեկան գործերի, տնտեսական պայմանների մասին հարուստ տեղեկություններ:

Հարկ է նշել, որ վաճառականության շրջանից եկող նոր ազդակները խթանում էին նույնիսկ հոգևորականությանը: Օրինակ, Սիմեոն Լեհացին, որը հոգևորականի կրթություն էր ստացել իր ծննդավայր Զամոսց քաղաքում, ուղևորություն է կատարում Լեհաստանից դեպի Մերձավոր Արևելքի երկրներ՝ նպատակ ունենալով այցելելու Պաղեստինի սրբավայրեր [1]: Սիմեոն Լեհացին երիտասարդ հասակում լինում է Բալկանյան թերակղզում, Սիրիայում, Պաղես-

տինում և Եգիպտոսում: Բացի սրբավայրերից, նրա ուշադրությունն են գրավում նաև այցելած երկրների բնակչության զբաղմունքները, քրիստոնյաների՝ հատկապես հայերի դրությունը, նրանց կենցաղը և այլն:

Ուղեգրական երկերի հետ նմանություն ունեն նաև օրագրական բնույթի գրառումները: Հայ վաճառականները, սովորաբար, ունենում էին տետրեր, որտեղ գրառվում էին կատարված գործարքները, հեղինակների համար հիշարժան դեպքերը և այլն: Այդ առումով նշանավոր է Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը»[1]. 1647 թ. նա կատարել է իր առաջին ճանապարհորդությունը, առևտրական գործերով մինչև 1681 թվականը եղել Իրանում, Թուրքիայում և եվրոպական երկրներում: Բացի տնտեսական բնույթի տեղեկություններից, Ագուլեցին իր աշխատության մեջ տվել է նաև ազգագրական, կենցաղային բովանդակության բազմաթիվ նկարագրություններ: Հատուկ ուշադրության են արժանի նրա մտորումները կյանքի իմաստի, հարստության նշանակության և այլ հարցերի վերաբերյալ: Ագուլեցու «Օրագրի» հիման վրա կարելի է պատկերացում կազմել ոչ միայն ժամանակի հայ վաճառականների դրության, այլև նրա մտածելակերպի ու հոգեբանության վերաբերյալ:

17-րդ դարում օրագրական գրառումներ է կատարել նաև Երեմիա Քյոմուրճյանը, որն անդրադարձել է 1648-1662 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած պատմական նշանակության դեպքերին: Այս հեղինակն իր՝ նշված աշխատությամբ հանդես չի գալիս իբրև ժամանակագիր: Երեմիա Քյոմուրճյանն առաջնորդվել է իր անձնական կյանքի խնդիրներով, սեփական աշխարհընկալմամբ:

17-րդ դարի խոշոր պատմիչ է նաև Առաքել Դավրիժեցին, որի «Հայոց պատմությունն» ընդգրկում է 1601-1662 թվականներին Հայաստանում, Թուրքիայում, Իրանում, Ստամբուլի, Սպահանի, Լվովի և այլ վայրերի հայկական գաղութներում տեղի ունեցած իրադարձությունները[2]: Ա. Դավրիժեցին մանրամասն ներկայացրել է պարսից Շահ Աբբաս I թագավորի կողմից հայերի՝ Պարսկաստան բռնի գաղթի պատմությունը: 17-րդ դարի մյուս նշանավոր պատմիչների, ժամանակագիրների, ուղեգիրների շարքից կարելի է հիշատակել Զաքարիա Քանաքեռցուն, Կոստանդին Զուղայեցուն, Գրիգոր Դարանաղցուն և ուրիշների, որոնց աշխատությունները պահվում են Հայաստանի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանում[3]:

---

[1] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը». Ե., 1938:
[2] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896:
[3] «Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի», հրատ. Մ. Նշանյանը, Երուսաղեմ, 1939. Զաքարիա Սարկավագի Պատմութիւն Ա. Բ. Գ հատոր. Վաղարշապատ, 1870.

17-րդ դարի հայ մատենագրության ու պատմագրության որոշ կարևոր հեղինակների ու նրանց գործերի քննությունը հատկապես կարևոր է հայոց պետականության բացակայության պայմաններում ընդհանրապես գիտության, իսկ մասնավորապես պատմագրության զարգացումն ու դրա ուղղությունները մեկնաբանելու, ինչպես նաև դարաշրջանի համաշխարհային պատմագրության մեջ հայ պատմագրության կատարած դերի և ունեցած առանձնահատկությունների տեսանկյունից:

Ուշ միջնադարի հայ պատմագրությունն աչքի է զարնում իր մի շարք առանձնահատկություններով: Նախ, այն զգալի չափով աշխարհիկանացված է, թեպետ նրա ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը պատկանում է հոգևոր դասին: 17-րդ դարից արդի ժամանակները հասած պատմական բնույթի աշխատությունները գերազանցապես ժամանակագրություններ, հուշագրություններ ու օրագրեր են, որտեղ բացակայում են հայ եկեղեցու և իշխանական տների պատմությունները, նվազագույնին է հասցված աստվածաբանական դոգմաների քարոզն ու դավանաբանական վեճերին անդրադարձը: Թեմատիկան և շարադրված նյութի բովանդակությունը շոշափում են առավելապես աշխարհիկ բնույթի խնդիրներ:

17-րդ դարի հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներից շատերը ողբացել են իրենց օրերի դառը կյանքը, քարոզել են հայ ժողովրդի միասնությունն ու միաբանությունն, կարևորել լուսավորության, քաղաքական ու մշակութային վերածնության անհրաժեշտությունը: Հատկանշական է այն հանգամանքը, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի և ոչ մի հեղինակ իր պատմությունն ու երկը չի սկսել մարդկության ծննդից, նրանցից գրեթե ոչ մեկը նպատակ չի հետապնդել իր ժողովրդին դաստիարակելու անցյալի սխրանքներով, ինչը հատուկ է նախորդ դարերի հայ պատմագիրներին: Անշուշտ, պատահական չէր այդ երևույթը: փոխվել էին ժամանակները, կարևորագույն խնդիր էր դարձել հայ ժողովրդի վերակենդանացումը, նրան միջնադարյան խավարից դուրս բերումը: Հայ պատմագիրների գլխավոր խնդիրն էր բարձրացնել ժամանակակիցների, ինչպես նաև գալիք սերունդների ազգային ինքնագիտակցությունն ու մարդկային արժանապատվությունը, արժանին հատուցել անցյալի լավագույն ավանդույթներին, քարոզել նորն ու մտավոր կյանքի զարթոնքը: Պատահական չէ, որ նրանց ճնշող մեծամասնությունն իրեն նվիրել է հայ կյանքի զարթոնքի և նրա հետագա զարգացման արգասաբեր ու դժվարին գործին:

Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրապարակեց Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915 և այլն:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ 17-րդ դարի հայոց պատմագրության մեջ իր արտացոլումն է գտել հայ առևտրական դասի գաղափարախոսությունը, որն էլ մեծապես նպաստել է նրա աշխարհականացման գործընթացին: Հայ պատմագրությունը ծնել է աշխարհիկ հեղինակներ՝ ի դեմս առևտրական դասի ներկայացուցիչների, որոնք էլ իրենց օրագրություններով և ուղեգրություններով նոր շունչ են հաղորդել պատմագրական գործերին:

17-րդ դարի պատմագրության երրորդ խիստ կարևոր առանձնահատկությունը հայ գաղթավայրերին ու պանդխտությանը նվիրված աշխատությունների երևան գալն էր: Դրանցում արտացոլված են հայ գաղթօջախներում տեղի ունեցած դավանաբանական պայքարը Հայ առաքելական եկեղեցու հետևորդների և ունիթորների միջև, կաթոլիկ եկեղեցու՝ հայավնաս քաղաքականությունը, ազգային-կրոնական հալածանքները և այլն:

Ոչ պակաս կարևորություն ունի այն հանգամանքը, որ քննարկվող դարաշրջանի պատմական երկերն ու աշխատություններն ստեղծվել են, որոշ բացառություններով, ժամանակի խոսակցական լեզվով, ինչն ստեղծված գործերը մատչելի էր դարձնում հայ հասարակության լայն շերտերին:

17-րդ դարում հայ պատմագիրների ստեղծած գործերն իրենց պարունակած հարուստ և արժեքավոր նյութերով ու տվյալներով, ականատեսների ու գործող անձանց գրվածքներով հավաստի սկզբնաղբյուրներ են ոչ միայն Հայաստանի, հայ ժողովրդի, հայկական գաղթօջախների՝ նշված դարաշրջանի, այլև Պարսկաստանի, Թուրքիայի, Վրաստանի և Արևելքի որոշ այլ երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Այդ հանգամանքն է, անկասկած, պայմանավորում համաշխարհային պատմագրության մեջ հայոց պատմագրության գրված կարևոր տեղն ու կատարած անփոխարինելի դերը: